Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2014 թվական, հոկտեմբերի 31, ժամը՝ 15:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Բալայան	ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության պետ
Բորիս Խառատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Շմավոն Մկրտչյան	Առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ձեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Կարինե Ալոյան	«Էլեկտրաարհմիություն» արհեստակցական կազմակերպությունների ճյուղային միության նախագահ
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Շուշանիկ Բարսեղյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահի տեղակալ-սոցիալական գործընկերության հարցերով փորձագետ

Հրավիրվածներ՝

Արայիկ Պետրոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ
Ջեմմա Բաղդասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Նարինե Բալայան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական
Թադևոս Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Անուշ Դանիելյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Նազիկ Նազարյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հաշվետվությունների ուսումնասիրության վարչության պետ (նիստին մասնակցում էր Հանձնաժողովի անդամ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանի փոխարեն)
Վահագն Լալայան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ներդրումային քաղաքականության վարչության պետ (նիստին մասնակցում էր Հանձնաժողովի անդամ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Էմիլ Տարասյանի փոխարեն)
Պարույր Ջանգուլյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի և ՓՄՁ զարգացման վարչության կարգավորման ազդեցության գնահատման գործընթացը համակարգող խորհրդատու
Միքայել Փիլիպոսյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի

	իրավաբանական բաժնի պետ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսագիտական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Շամամ Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Սուրեն Կարայան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Էմիլ Տարասյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Ժանետա Թորոսյան	Մշակույթի և ԶԼՄ-ների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի տարածքային միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության «Տաքսի ծառայությունների ասոցիացիա»

ճյուղային միության գործադիր տնօրեն

Սուրեն Չիբուխչյան

Հայաստանի գործատուների
հանրապետական միության
«Արմենպակ» ճյուղային միության
նախագահ

Հանձնաժողովի անդամներին ուղարկված նիստի օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ սոցիալական գործընկերների մասնակցությամբ լրամշակված տարբերակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում անհատական աշխատանքային վեճերի արտադատական լուծման համակարգի ներդրման հնարավորության ներկայացում և քննարկում:**
2. **Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ նոր կոլեկտիվ պայմանագրի կնքման հարցերի քննարկում:**
3. **Այլ հարցեր:**

Հանձնաժողովի նախագահի կողմից հարց բարձրացվեց, թե արդյոք կան նիստի օրակարգի նախագծի հետ կապված հարցեր կամ առաջարկներ: Հանձնաժողովի անդամ Գ. Մակարյանի կողմից առաջարկվեց օրակարգի 1-ին հարցի ձևակերպումից հանել «սոցիալական գործընկերների մասնակցությամբ» բառերը, քանի որ իրենց կողմի կարծիքով, ըստ էության, որպես այդպիսին սոցիալական գործընկերների մասնակցությամբ քննարկումներ չեն եղել, չի ապահովվել սոցիալական գործընկերների կարծիքների ներկայացման հնարավորություն և որ իրենց կողմի ներկայացուցիչը մասնակցել է նախագծի՝ միայն առաջին օրվա քննարկմանը:

Ներկայացված դիտարկման կապակցությամբ Հանձնաժողովի նախագահի կողմից տրված հարցի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ այնուամենայնիվ քննարկումներ մյուս գործընկերների մասնակցությամբ եղել են, ինչը հաստատվեց նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչների կողմից:

Գ. Մակարյանի կողմից ներկայացված առաջարկությանը համաձայնություն տալու վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից բարձրացված առաջարկն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից: Հանձնաժողովը որոշեց հաստատել նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

1. **«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակված տարբերակի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության, ինչպես նաև**

Հայաստանի Հանրապետությունում անհատական աշխատանքային վեճերի արտադատական լուծման համակարգի ներդրման հնարավորության ներկայացում և քննարկում:

2. **Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ նոր կոլեկտիվ պայմանագրի կնքման հարցերի քննարկում:**
3. **Այլ հարցեր:**

1. Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Թ. Ավետիսյանը:

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) լրամշակված տարբերակի վերաբերյալ ներկայացվեց ամփոփ տեղեկատվություն: Նշվեց, որ քննարկումների արդյունքում փոփոխություններ են կատարվել նախագծի 61 հոդվածներից 6-ում:

Նշվեց նաև, որ քննարկվել են նաև Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից 2014 թվականի հոկտեմբերի 13-ի N 224 գրությամբ ներկայացված առաջարկությունները: Թ. Ավետիսյանն անդրադարձավ Հայաստանի գործատուների հանրապետական միության գրությամբ ներկայացված առաջարկություններին: Գրությամբ ներկայացված առաջարկությունների 1-ին կետով աջարկվել էր ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 41-րդ հոդվածում աշխատանքի բառից հետո լրացնել « և դրա հետ անմիջականորեն կապված սոցիալ-տնտեսական բնագավառների» բառերը:

Ներկայացված առաջարկության կապակցությամբ Գ. Մակարյանը նշեց, որ իրենց, որպես գործատուների ներկայացուցիչների, առավել շատ հետաքրքրում է սոցիալ-տնտեսական հարցերի քննարկումը Հանձնաժողովի նիստերում: Առաջարկվող լուծման պարագայում Հանձնաժողովի նիստերի օրակարգերում կընդգրկվեն նաև սոցիալ-տնտեսական բնագավառներին առնչվող հարցեր, օրակարգերը կդառնան առավել լիարժեք:

Այս առաջարկության կապակցությամբ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ սոցիալ-տնտեսական հարաբերություններին առնչվող հարցերի քննարկումը դուրս է ՀՀ աշխատանքային օրենսգրքի կարգավորման դաշտից: Բացի այդ առաջարկվող լրացումն ընդունելու արդյունքում այլ ծավալուն լրացումներ պետք է կատարվեն Օրենսգրքի մի շարք այլ հոդվածներում ևս: Օրենսգրքի 41-րդ հոդվածում սոցիալ-տնտեսական հարաբերություններին առնչվող հարցերի ներառման դեպքում անհրաժեշտ կլինի փակել դաշտն ամբողջությամբ և ծավալուն փոփոխություններ կատարել Օրենսգրքի նաև այլ հոդվածներում, ինչն, ըստ էության, իրականում անիրատեսական է: Ուստի ներկայացված հիմնավորմամբ առաջարկությունն ընդունելի չէ: Բացի այդ նշվեց նաև, որ կան մի շարք այլ հանձնաժողովներ, խորհուրդներ, որտեղ ներկայացված են նաև գործատուները և որտեղ քննարկվում են սոցիալ-տնտեսական բնագավառներին առնչվող հարցեր:

Հնչեցված տեսակետի կապակցությամբ Հայաստանի գործատուների հանրապետական միության և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ներկայացուցիչների կարծիքով Օրենսգրքի 41-րդ հոդվածում առաջարկվող լրացումը Օրենսգրքի այլ հոդվածներում փոփոխությունների տեղիք չի տալիս:

Գրությամբ ներկայացված առաջարկությունների 2-րդ կետով առաջարկվել էր Օրենսգրքի 94-րդ հոդվածը թողնել նույնությամբ:

Այս կապակցությամբ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ Նախագծով Օրենսգրքի 94-րդ հոդվածում առաջարկվող լրացման նպատակն է առավել հստակեցնել աշխատանքային պայմանագրերի տեսակների հետ կապված հարցերը և, որ առաջարկվող լրացումը բխում է Օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված աշխատանքային հարաբերությունների կայունության սկզբունքից:

Գրությամբ ներկայացված առաջարկությունների 3-րդ կետով առաջարկվել էր Օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասը թողնել անփոփոխ:

Վերևում ներկայացվածի կապակցությամբ Թ. Ավետիսյանը նշեց, որ Օրական 24 ժամ աշխատաժամանակի ռեժիմի առկայությունը չի համապատասխանում Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ հոդվածի 1-ին կետի պահանջին: Փոփոխության նպատակն է Օրենսգրքի դրույթը համապատասխանեցնել Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի պահանջին: Անհամապատասխանությունն արձանագրվել է Սոցիալական իրավունքի եվրոպական կոմիտեի 2010 թվականի եզրակացություններում:

4-րդ կետում ներկայացված առաջարկությամբ նախատեսվում էր Օրենսգրքի 248-րդ հոդվածի 3-րդ մասում «ակտեր» բառից հետո լրացնել «ապահովելով աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգերի ներդրումը ըստ դրանց ընթացակարգերի»:

Գ. Մակարյանի և Շ. Բարսեղյանի կողմից նշվեց, որ մինչ այժմ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմերն ու կանոնները դեռևս չեն հաստատվել և ներկայացված ձևակերպմամբ առաջարկվում է համակարգային լուծում տալ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հարցերում գործատու-աշխատող հարաբերություններին, կանոնակարգել նշված հարցերը բոլոր մակարդակներում:

Այս կետում ներկայացված առաջարկության կապակցությամբ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ Օրենսգրքի 248-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է գործատուների պարտավորությունն այն մասին, որ աշխատանքը պետք է կազմակերպվի աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործատուն պարտավոր է ընդունել աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության վերաբերյալ ներքին իրավական ակտեր, իսկ 4-րդ մասով սահմանված է, որ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին իրավական ակտերի, աշխատանքների կազմակերպման և իրականացման կանոնների, հրահանգների

պահանջները չպահպանելը համարվում է կազմակերպության ներքին կարգապահական կանոնների խախտում:

Միաժամանակ կարևորվեց այն հարցը, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված են նման պահանջներ, որոնք բխում են «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքների պահանջներից:

Բացի վերոնշյալը, առաջարկվող ձևակերպումն ըստ էության պարզ չէ և իրավակիրառական պրակտիկայում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք կտա:

Օրակարգի 1-ին հարցի շրջանակներում Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի շրջանակներում Գործատուների հանրապետական միության առաջարկությունները ներկայացնել շահագրգիռ մարմիններ (ՀՀ արդարադատության, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների և ՀՀ առողջապահության նախարարություններ) կարծիքի:

Այնուհետև օրակարգի 1-ին հարցի շրջանակներում Բ. Խառատյանը ներկայացրեց Նախագծի վերաբերյալ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի այն առաջարկությունները, որոնք աշխատանքային կարգով քննարկման ժամանակ չէին ընդունվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, և, որոնք կարևորվում էին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից:

Նշվեց, որ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ արգելվում է հարկադիր աշխատանքը ու թեև Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 29 և 105 կոնվենցիաները, որտեղ սահմանված է «հարկադիր աշխատանք» եզրույթը, սակայն Հայաստանի Հանրապետության որևէ իրավական ակտով սահմանված չէ «հարկադիր աշխատանք» հասկացությունը: Ուստի առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքում տալ «հարկադիր աշխատանք» հասկացության սահմանումը:

Այս առաջարկության վերաբերյալ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ «Հարկադիր աշխատանք» եզրույթի առանձին սահմանման անհրաժեշտությունը չկա, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է, որ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին» ԱՄԿ կոնվենցիան, որով սահմանված է «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» եզրույթը: Բացի այդ ՀՀ Սահմանդրությամբ սահմանվում է, որ հարկադիր աշխատանքն արգելվում է: Միաժամանակ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով որպես սկզբունք ամրագրված է «ցանկացած ձևի (բնույթի) հարկադիր

աշխատանքի և աշխատողների նկատմամբ բռնությունների արգելումը»: Իսկ, եթե փորձենք ՀՀ աշխատանքային օրենսգրքում տալ «հարկադիր աշխատանք» հասկացության սահմանումը, ապա հարկ կլինի ԱՄԿ կոնվենցիան ամբողջ բովանդակությամբ բերել և ամրագրել օրենսգրքում, որի իմաստը վերևում նշված հիմնավորմամբ չկա:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից հարց բարձրացվեց այն մասին, թե ինչ կտա միայն «հարկադիր աշխատանք» հասկացության սահմանումը Օրենսգրքում այն դեպքում, եթե չունենանք հետագա կարգավորումները:

Վերոնշյալի կապակցությամբ Բ. Խառատյանի կողմից նշվեց, որ միայն հասկացության սահմանումը օրենսգրքում բավարար է, և հետագա այլ կարգավորումներ անհրաժեշտ չեն:

Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ ինքն ըստ էության, մանրամասն լրացուցիչ պետք է ծանոթանա Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի կողմից ներկայացված առաջարկություններին:

Բ. Խառատյանի կողմից ներկայացված 2-րդ առաջարկությունը վերաբերում էր ՀՀ աշխատանքային օրենգրքի 59-րդ հոդվածի 4-րդ մասին, որով նախատեսվում էր, որ Օրենսգրքում ամրագրվի, որ կազմակերպության կոլեկտիվ պայմանագիրը պահպանում է իր ուժը նաև կազմակերպության վերակազմակերպման, մասնավորեցման (ապապետականացման) դեպքերում:

Ներկայացված 2-րդ առաջարկության կապակցությամբ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ այն լրացուցիչ քննարկման կարիք ունի:

Այս առումով Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի կողմից առաջարկվեց բարձրացված հարցը հստակ ձևակերպել և ներկայացնել ԱՄԿ փորձագետների կոմիտե՝ վերջինիս դիրքորոշումը ստանալու համար:

Հնչեցված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

Բ. Խառատյանի կողմից ներկայացված 3-րդ առաջարկությունը վերաբերում էր Օրենսգրքի 74-րդ հոդվածին: Նշվեց, որ համաձայն ԱՄԿ փորձագետների դիտարկման՝ գործադուլ հայտարարելու համար կազմակերպության աշխատակիցների կեսից ավելիի համաձայնությունը ստանալու պահանջը չափից ավել է, ուստի առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի «երկու երրորդի» բառերը փոխել «մեկ երկրորդի» բառերով: Այսինքն, առաջարկվում է հոդվածում ամրագրված կազմակերպությունում գործադուլ հայտարարելու մասին որոշումը կազմակերպության աշխատողների երկու երրորդի հավանությանն արժանանալու պահանջը փոխարինել մեկ երկրորդով:

Հանձնաժողովի նախարար Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության քննարկմանն է ներկայացված ՀՀ մարդու

իրավունքների պաշտպանի գրությամբ ՀՀ արդարադատության նախարարություն ներկայացված «Գործադուլի իրավունքի իրականացման կարգի վերաբերյալ» հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) և առաջարկվեց հայեցակարգի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացվող առաջարկություններում ներառել նաև վերոնշյալը:

Ա. Ասատրյանի կողմից ներկայացված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

Բ. Խառատյանի կողմից ներկայացված 4-րդ առաջարկությունը վերաբերում էր Օրենսգրքի 119-րդ հոդվածին: Մասնավորապես, առաջարկվում էր Օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասից հանել վերջին նախադասությունը, որով սահմանվում է, որ «Եթե սահմանված ժամկետում պատասխան չի տրվում, ապա գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը»: Խոսքը վերաբերում է աշխատողների ներկայացուցչին աշխատանքից ազատելու դեպքում գործատուի կողմից աշխատողների ներկայացուցչական մարմնին (տեսչական բարեփոխումների հայեցակարգի շրջանակներում մշակված և ՀՀ ԱԺ-ի քննարկմանը ներկայացված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի համաձայն) դիմելու համար սահմանված 14 օրվա ընթացքում պատասխան չներկայացնելուն: Բ. Խառատյանի կողմից ներկայացվեց այն հիմնավորումը, որ նախորդ դրույթում արդեն ամրագրված է 14 օրվա ընթացում պատասխան ներկայացնելու պահանջը: Ուստի նշված վերջին նախադասությունն անհրաժեշտ է հանել:

Այս կետի շրջանակներում առաջարկում էր նաև Օրենսգրքի 119-րդ հոդվածի 3-րդ մասից հանել վերջին նախադասությունը, որով սահմանում է, որ դատարանը կարող է անվավեր ճանաչել աշխատողին ազատելու համաձայնություն չտալու մասին որոշումը, եթե դրանով ոտնահարվում են գործատուի շահերը:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի, Թ. Ավետիսյանի, Ն. Բալայանի կողմից այս առաջարկության կապակցությամբ նշվեց, որ օրենսգրքի գործող դրույթն ապահովում է առավել հստակ կարգավորում և, եթե հանվի այդ պահանջը, ապա կառաջանա շահերի բախում: Ուստի նշված առաջարկությունն ընդհանուր առմամբ ընդունելի չէ:

Բ. Խառատյանի կողմից ներկայացված 5-րդ առաջարկությունը վերաբերում էր Օրենսգրքի 179-րդ հոդվածին: Առաջարկվում էր Օրենսգրքում տալ «նվազագույն աշխատավարձ» հասկացության սահմանումը:

Այս առաջարկության կապակցությամբ Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ նման սահմանումը լուրջ տնտեսական խնդիրներ առաջ կբերի: Դա հնարավոր է կարգավորել կոլեկտիվ բանակցությունների արդյունքում կոլեկտիվ պայմանագրերով:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ներդրումային քաղաքականության վարչության պետ Վ. Լալայանի կողմից ևս շեշտվեց, որ նման սահմանում տալը բացասական ազդեցություն կունենա գործարարության վրա:

Նշված հարցի շրջանակներում Ա. Ասատրյանի կողմից նշվեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2015 թվականի ծրագրում նախատեսվել է նվազագույն աշխատավարձի սահմանման մեթոդաբանության մշակումը և առաջարկվեց, բարձրացված հարցին անդրադառնալ մեթոդաբանության մշակման շրջանակներում կազմակերպվող քննարկումների ժամանակ:

Հնչեցված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

Ներկայացված 6-րդ առաջարկությունը վերաբերում էր Օրենսգրքի 186-րդ հոդվածի 6-րդ մասին, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անհաղթահարելի ուժ համարվող պատճառներով առաջացած, ինչպես նաև աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի համար չի վճարվում: Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի առաջարկության իմաստով ֆորս-մաժորների դեպքում աշխատողը չպետք է տուժի:

Հանձնաժողովի մյուս երկու կողմերի կարծիքով ֆորս-մաժորների դեպքում փաստացի գործատուն էլ հնարավորություն չի ունենա վճարում կատարելու:

Բ. Խառատյանի կողմից առաջարկվեց նաև Օրենսգրքում ամրագրել դրույթ, ըստ որի՝ գործատուները թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն կներկայացնեն պետական լիազոր մարմնին:

Ա. Ասատրյանի կողմից առաջարկվեց վերոնշյալ առաջարկությունը ևս ներկայացնել շահագրգիռ մարմիններ կարծիքի:

Հնչեցված առաջարկությունն ընդունվեց Հանձնաժողովի՝ նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

Օրակարգի 1-ին հարցի 2-րդ մասի շրջանակներում (Հայաստանի Հանրապետությունում անհատական աշխատանքային վեճերի արտադատական լուծման համակարգի ներդրման հնարավորության քննարկում) Ա. Ասատրյանի և Բ. Խառատյանի կողմից առաջարկվեց ձևավորել աշխատանքային խումբ, որը կզբաղվի նշված հարցերով, և Հանձնաժողովի հաջորդ նիստում, եթե պատրաստ լինեն ինչ-որ լուծումներ, ներկայացվեն:

Միաժամանակ առաջարկվեց աշխատանքային խումբ ձևավորելու համար կողմերը ներկայացնեն լրացուցիչ առաջարկություններ:

Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց նաև, որ Հանձնաժողովն ունենա նաև աշխատանքային խմբերի աշխատակարգ:

Վերևում ներկայացված առաջարկություններն ընդունվեցին Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից և Հանձնաժողովը որոշեց.

1. *Ձևավորել աշխատանքային խումբ՝ Հայաստանի Հանրապետությունում անհատական աշխատանքային վեճերի արտադատական լուծման համակարգի ներդրման հնարավորության քննարկման և լուծումների ներկայացման համար:*

2. *Հայաստանի Հանրապետությունում անհատական աշխատանքային վեճերի արտադատական լուծման համակարգի ներդրման հնարավորության քննարկման և լուծումների ներկայացման աշխատանքային խմբի ձևավորման համար կողմերը ներկայացնեն լրացուցիչ առաջարկություններ:*
3. *Մշակվի նաև Հանձնաժողովի աշխատանքային խմբերի համար աշխատակարգ:*

2. Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու առնչությամբ նոր կոլեկտիվ պայմանագրի կնքման հարցերի քննարկում:

Օրակարգի 2-րդ հարցի շրջանակներում Գ. Մակարյանի կողմից ներկայացվեցին Հայաստանի գործատուների հանրապետական միության հետևյալ առաջարկությունները (սույն արձանագրությանը կցվում է նաև Հայաստանի գործատուների հանրապետական միության 2014 թվականի հոկտեմբերի 31-ի N 236 գրությունը)՝

1. Հանձնաժողովի աշխատակարգը լրամշակելու նպատակով սոցիալական գործընկերների ներկայացմամբ ստեղծել եռակողմ աշխատանքային խումբ, որը կաշխատի Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) աջակցությամբ:
2. 2015 թվականի հունիսին Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ սոցիալական գործընկերների ներկայացմամբ ստեղծել եռակողմ աշխատանքային խումբ՝ նոր Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի նախագծի մշակման համար:
3. Վերանայել և փոփոխել Հանրապետական եռակողմ հանձնաժողովի թվական և անվանական կազմը՝ սոցիալական գործընկերների ներկայացմամբ:

Ներկայացված առաջարկություններն ընդունվեցին Հանձնաժողովի նիստին ներկա անդամների կողմից: Հանձնաժողովը որոշեց.

1. *Հանձնաժողովի աշխատակարգը լրամշակելու նպատակով սոցիալական գործընկերների ներկայացմամբ ստեղծել եռակողմ աշխատանքային խումբ, որը կաշխատի Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) աջակցությամբ:*
2. *2015 թվականի հունիսին Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ սոցիալական գործընկերների ներկայացմամբ ստեղծել եռակողմ աշխատանքային խումբ՝ նոր Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի նախագծի մշակման համար:*
3. *Վերանայել և փոփոխել Հանրապետական եռակողմ հանձնաժողովի թվական և անվանական կազմը՝ սոցիալական գործընկերների ներկայացմամբ:*

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**